ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 սեպտեմբերի ուրբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

123
(2603)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 82

Իր վարչապետության չորս տարիներին Նիկոլ Փաշինյանը ոչ միայն տեղական մակարդակում է մանիպուլացրել հասարակությանը, այլ նաեւ ասել ստեր, որոնք հերքվել են, օրինակ, ՌԴ կողմից:

Մասնավորապես, 2020 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազատություն ռադիոկայանի եթերում ասել էր, թե Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կողմից շրջափակման մեջ են մնացել նաեւ ռուս խաղաղապահները:

ՌԴ ՊՆ-ն, սակայն, հերքել է Նիկոլ Փաշինյանի խոսքերը եւ ասել՝ Լեռնային Ղարաբաղում ռուս խաղաղապահներ չեն մնացել շրջափակման մեջ:

«Ռիա Նովոստի» գործակալության հաղորդմամբ՝ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունն է հերքել ՀՀ վարչապետի հայտարարությունը:

2018 թվականի մարտի 16-ին Երեւանի ավագանու «Ելք» դաշինքից ավագանու անդամ (այսօրվա վարչապետի աշխատակազմի ղեկավար) Արայիկ Հարությունյանն ու Ազգային ժողովի պատգամավոր Լենա Նազարյանը դատի էին տվել «Երեւան» հիմնադրամին եւ Պետեկամուտների կոմիտեին: Դատական կարգով նրանք պահանջում են տրամադրել տվյալներ, թե վերջին երկու տարիների ընթացքում ովքեր են 100 հազար դրամ եւ ավելի գումար անանուն փոխանցել «Երեւան» հիմնադրամին: Քանի որ հիմնադրամը դա համարել էր անձնական տվյալ, ավագանու անդամն ու պատգամավորը որոշել էին հարցը կարգավորել դատական եղանակով՝ պարտադրելով հրապարակել նվիրատուների ցանկը: Նրանք որոշել էին, թե նվիրատվությունները կոռուպցիոն ռիսկեր են պարունակում: Ճակատագրի հեգնանքով այժմ Լենա Նազարյանը հանդիսանում է «Իմ քայլը» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ: Այս հիմնադրամում եւս մեծ թվով անանուն նվիրատվություններ են ստացվում, սակայն Լենա Նազարյանը, կարծես թե, նույն սկզբունքայնությամբ չի անհանգստանում եւ ոչ մի կոռուպցիոն ռիսկ չի տեսնում: Սա այն դեպքում, երբ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի գլխավորած հիմնադրամում մեծ թիվ են կազմում նաեւ անանուն նվիրատուները, այսինքն՝ հանրությունը չի տեղեկանում, թե ով է վարչապետի տիկնոջ հիմնադրամին գումար փոխանցել: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից մի քանի թվեր է ներկայացնում, թե անանուն քանի փոխանցում է արվել 2021-2022 թվականներին Աննա Հակոբյանի հիմնադրամին: Եւ այսպես, 13 այդպիսի միանվագ փոխանցումներ են կատարվել՝ 5 մլն դրամ, 47 մլն դրամ, 25 մլն դրամ, 37 մլն դրամ, 20 մլն դրամ, 8 մլն դրամ եւ այսպես շարունակ: Կան նաեւ դոլարային փոխանցումներ՝ 300 հազար դոլար, 5 հազար դոլար: Մյուս տարիների թվերն ավելի խոսուն են. 2018-ին հիմնադրամին 510.000 դոլար ու 77 503 000 դրամ է փոխանցվել: Ի դեպ, 510.000-ից 500.000 դոլարը եղել է միանվագ փոխանցում: 2019-ի 258 197 000 դրամ, 50.200 դոլար ու 10 եվրո է անանուն փոխանցվել: 2020-ին 10.311.000 դրամ ու 1019 դոլար է փոխանցվել անանուն: Այսինքն՝ ստացվում է՝ չորս տարի առաջ Լենա Նազարյանը կոռուպցիոն ռիսկեր էր տեսնում ընդամենը 100 հազար դրամ փոխանցման մեջ, իսկ հիմա անգամ 300 հազար դոլարի անանուն փոխանցումը չի մտահոգում նրան:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի երեկվա՝ ակադեմիական քաղաք ստեղծելու ու բուհերը երեւանին կպած Աշտարակ քաղաք տեղափոխելու հայտարարությունն իրականում ալեկոծել է բարձրագույն ուսումնական հաստատությունների մի շարք ղեկավարների հոգիները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ որոշ բուհերի ռեկտորներ անհանգստացած են, թե ինչ է լինելու իրենց ճակատագիրը, որովհետեւ թվով 8 պետական բուհ թողնելը նշանակում է՝ մի շարք հաստատություններ օպտիմալացվելու ու միավորվելու են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կառավարության հեռահար տեսլականներից է միավորել Հայաստանի Վ. Բրյուսովի անվան պետական, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարաններն ու Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտը: Նշենք, որ բացի վերոնշյալ երեք բուհերի միավորումը, կառավարության ավելի վաղ ունեցած տեսլականներից էր նաեւ Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի եւ Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի միավորումը: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարար Վահրամ Դումանյանի մամուլի քարտուղարին՝ տեղեկանալու, թե նման քննարկում կա արդյոք նախարարությունում, ինչին ի պատասխան՝ Գեղամ Մելիքբեկյանն ասաց. «ԿԳՄՍՆ ոլորտներին առնչվող ցանկացած հարց քննարկվում է ոչ միայն գերատեսչության ներսում, այլեւ բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Երբ կայացվում է որոշում, այդ մասին կատարվում է համապատասխան իրազեկում»: ԿԳՄՍ-ն փաստացի չհերքեց հանգամանքը, որ նախարարության ներսում նման քննարկում եղել է կամ կա: Մնում է պատկերացնել, թե Աշտարակի մանկավարժական համալսարանի կրթական որակն ու ներգրավվածությունը ապագայում ինչպիսին կլինի:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե որ դատավորի թեթեւ ձեռքով գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանը կալանավորվեց: Այդ դատավորը Երեւան քաղաքի դատավոր Տաթեւիկ Մուրադյանն է, որը 2021 թվականի հոկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակվել է Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր: Վերջինս դատական համակարգում նոր դեմք է եւ համարվում է ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի կադրերից մեկը: Հիշեցնենք, որ նախօրեին Արցախի ՊԲ հրամանատարը ձերբակալվեց Արցախ-Հայաստան ավտոճանապարհին: Նրա փաստաբանը պնդում է, որ երբեք ծանուցում չի ուղարկվել նախաքննական մարմին ներկայանալու վերաբերյալ: Հավելենք, որ գեներալ-լեյտենանտին տեղափոխել են «Վարդաշեն» ՔԿՀ, եւ նա մեղադրվում է Շուշիի պաշտպանությունը ճիշտ չկազմակերպելու համար, ինչի հետեւանքով քաղաքը հանձնվեց հակառակորդին: Արզումանյանը, սակայն, չի ընդունում մեղադրանքը:

ՋՐԲԱԺԱՆ՝ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

ԲԱՆԱԿ՝ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կառավարությունն առաջարկում է 24 մլն դրամ մուծել պետբյուջե, 4.5-ամյա դասընթաց անցնել բանակում ու ազատվել բանակում պարտադիր զինծառայություն անցնելուց: Շատերն այն տեսակետին են, որ բանակը աղքատների համար միայն պարտադիր կլինի:

-Պարո՛ն Մանուկյան, աղմկահարույց նախագծի մասին ի՞նչ տեսակետ ունեք:

-Հիշյալ աղմկահարույց օրենսդրական նախաձեռնության հետ կապված հանրային լայն արձագանքին զուգահեռ կա մի շատ նուրբ հար. այն բացահայտում է, որ Հայաստանի պետական կառավարման համակարգը եւ Պաշտպանության նախարարությունը փնթի գործունեություն են ծավալում: Արդեն մի քանի օր է՝ քննարկվում է 24 միլիոն դրամով զինվորական պարտադիր ծառայությունից ազատվելու հարցը, ինչը ես կանվանեի «Փրկագնով բանակից ազատելու նախագիծ»: Սակայն հատկանշական է, որ օրենքի փոփոխության նախագծի մեջ 24 միլիոն դրամի մասին որեւէ բառ, խոսք չկա. 24 միլիոն դրամին առնչվող կետի փոփոխության հոդվածը դրա հեղինակները մոռացել են բովանդակություն դնել: Այսինքն՝ նախագծի մեջ նշված է, որ «հոդվածը պետք է լինի հետեւյալ խմբագրմամբ», ու չակերտներ է դրված, բայց չակերտների մեջ տեքստ, բովանդակություն չկա: 24 մլիոնի մասին խոսվում է նախագծի հիմնավորման մեջ, որտեղ հեղինակները բացատրում, հիմնավորում են՝ քաղաքացին ինչպես կարող է վճարել 24 միլիոն դրամն ու ազատվել զինվորական ծառայությունից: Այդ դրույթն ունի մի քանի անկյունաքարային, խնդրահարույց, ինչպես նաեւ հակասահմանադրական տարրեր: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սեռային, դասակարգային, գույքային խտրականությունը արգելված է, իսկ այս օրենքի նախագիծը ենթադրում է, որ մեծահարուստ, փող ու հնարավորություններ ունեցող անձը կարող է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից, հայրենիքի նկատմամբ չկատարել իր պարտականությունների մի մասը: Երկրորդ՝ Սահմանադրությունը ամրագրում է, որ պարտադիր զորակոչի ենթակա արական սեռի ՀՀ քաղաքացիները պարտավոր են ծառայության անցնել ՀՀ զինված ուժերում, ինչը նույնպես խախտվում է: Այս նախագիծը ոչ այլ ինչ է, քան հանրության մեջ ջրբաժան դնելու եւս մեկ դրսեւորում: Անցած 4 տարիներին ինչքան ու ինչպես ասես պիտակավորել են «նախկիններին», ու, սրան զուգահեռ, պատկերացրե՛ք մի իրավիճակ, երբ բանակ են զորակոչվում 2 երիտասարդ, ու գումար վճարելուց, չորսուկես ամիս ուսումնական ծառայություն անցնելուց ու բանակից ազատվելուց հետո մի երիտասարդը մյուսին ասում է. «Ես գնացի ծառայեցի, ավարտեցի, բայց դուք դեռ մեկուկես տարի ծառայելու եք, քանի որ իմ հայրը մեծահարուստ է, կարողացել է վճարել անհրաժեշտ գումարը, իսկ ձեր հայրերը մեծահարուստ չեն, չեն կարողացել վճարել անհրաժեշտ գումարը, ու դուք պետք է ծառայեք առաջնագծում՝ թշնամու թիրախավորման տակ»: Դե հիմա այս ամենից հետո պատկերացրե՛ք մեկուկես տարի ծառայություն իրականացնող զինվորի հոգեվիճակը: Եվ, վերջապես, այս գաղափարը ոտնահարում է Հայոց բանակի համաժողովրդականության գաղափարը:

-Բանակից ազատվելու կաշառքի դեպքերը միշտ են եղել ու կան նաեւ այսօր: Կարո՞ղ ենք ասել, որ կաշառքով ազատվելու քրեորեն պատժելի արարքն են այժմ ցանկանում օրինականացնել իշխանությունները:

-Պաշտպանության նախարարությունը հիմնավորման մեջ կոռուպցիայի մասին չէ, որ խոսել է, ուղղակի թվարկումների մեջ հիմնական շեշտը դրել է 24 միլիոն դրամի վրա. եթե մեկը վճարի այդ գումարը, ապա 5 տարվա կտրվածքով կապահովվի պայմանագրային զինծառայողի ամսական 400 հազար դրամ աշխատավարձը: Այսինքն՝ Հայաստանի պետական բյուջեով զինվորականների աշխատավարձը չեն ապահովում, ու դա ցանկանում են անել բանակից խուսափող անձանց հաշվին: Ի վերջո, որեւէ հաշվարկ չկա, թե քանի հոգի կարող է մասնակցել այդ ծրագրին, ու արդյոք այդ միջոցները բավարար կլինեն պարտադիր զինվորական ծառայությունը կազմակերպելու համար: Սա իշխանության հերթական պոպուլիստական քայլն է:

Կառավարությունը մեկ տարի առաջ խոստանում էր քննարկել պարտադիր զինվորական ծառայությունը կրճատելու հարցը: Խոսում էին, որ առաջնագծում չպետք է պարտադիր զինծառայություն իրականացնող անձինք լինեն: ԱԺ-ում այդ հարցի քննարկման ժամանակ էլ եմ խորհրդարանական ամբիոնից ասել, որ դա սոսկ պոպուլիզմ է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԱՃ

Պաշտոնական վիճակագրական տվյալները ուսումնասիրելով՝ ArmLur.am-ը բացահայտել է, որ պետական բյուջեի ծախսերի աճը շարունակում է զգալիորեն զիջել եկամուտների աճին:

Բացատրենք. ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2022թ. հունվար-հուլիս ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 4.1%-ով կամ 43.3 մլրդ դրամով, որից 18.1 մլրդ դրամը կազմում է ընթացիկ, իսկ 25.1 մլրդ դրամը՝ կապիտալ ծախսերի աճը:

Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերը ընդհանուր կազմել են 115.5 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերի ճշտված պլանը 2022թ. առաջին 9 ամիսների համար կազմում է 293.4 մլրդ դրամ, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի կատարման ներկայիս տեմպերի պահպանման դեպքում պլանը կթերակատարվի:

ՀՈՒՇԱՄԵԴԱԼԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ իրավապահները կասկածներ ունեն, որ ԱԺ-ից անհետացած հուշամեդալները եւ առյուծի արձանները ԱԺ աշխատակիցների ձեռքի գործը չէ: Ավելին, ներկա պահին քննություն են կատարում մեկ վարկածի շուրջ, որ միգուցե այն անհետացել է նոյեմբերի 9-ի գիշերը, երբ մի խումբ երիտասարդներ ներխուժեցին ԱԺ:

Ինչպես հայտնի է, նոյեմբերի 9-ի գիշերը, երբ հայտնի դարձավ ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի պարտության եւ հրադադարի եռակողմ հայտարարության ստորագրման մասին, Երեւանում անկարգություններ սկսվեցին, հարձակման ենթարկվեցին Ազգային ժողովի, կառավարության շենքերը:

Նշենք, որ Ազգային ժողովից անհետացել են առյուծի արձանիկը եւ հոբելյանական հուշամեդալներ: Այս մասին հայտնել էր SHAMSHYAN.com-ը:

Ոստիկանության Արաբկիրի բաժին է ահազանգել ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի օգնական Արման Մնացականյանը եւ հայտնել, որ 2021թ.՝ մեկ տարվա ընթացքում, թանգարանային նմուշները, ելնելով անհրաժեշտությունից, ենթարկվել են տեղափոխության մի քանի անգամ:

Վերջին տեղափոխությունից հետո նկատել են Առյուծի արձանիկի բացակայությունը, բաժնի աշխատողներով 2022թ. մայիս-հունիս ամիսներին կատարել են գույքագրում եւ պարզել չորս նմուշների բացակայությունը՝ մեկ բրոնզե արձանիկ (առյուծի պատկերով), երկու հոբելյանական հուշամեդալ (ռադիոժամ 2000-րդ հաղորդաշար), եւ մեկ հուշամեդալ՝ (Թբիլիսյան պատկերներ) կավից:

ԼՈՒԾԱՐՎԵԼ Է

ՊԱՏՃԱՌ ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ՉԻ ՍՏԱՑԵԼ

Արտակարգ իրավիճակների նախարարությունը դադարեցրել է կարի արտադրամասերից մեկի հետ ունեցած պայմանագիրը: Պատճառը, ըստ նախարարության համապատասխան որոշման, այն է, որ ընկերությունը չի կատարել իր պարտավորությունն, ու ԱԻՆ-ը որոշել է լուծարել պայմանագիրը:

ArmLur.am-ին հասած որոշման փաստաթղթից տեղեկանում ենք, որ կարի արտադրամասը ԱԻՆ-ին է փոխանցել միայն քաղաքացիական պաշտպանության համազգեստ:

⇨



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«23» [illegible] 2022թ. № 02/03.5/5668-2022

«ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՎԱՂԻՆԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ
Էլ. փոստ՝ vaghinak.yeghiazaryan@mail.ru

Հարգելի՛ պարոն Եղիազարյան,

Հայտնում եմ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 2022թ-ի մայիսի 31-ին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/81 պայմանագրի շրջանակներում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն չի կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում չի մատակարարել 1,2,3,7,8,9 չափաբաժիններով ապրանքներից (1000 հատ ամենօրյա համազգեստի լրակազմ, 2000 հատ սվիտերներ՝ մուգ փիրուզագույն, կարճաթև, 600 հատ սվիտերներ՝ մուգ փիրուզագույն, կարճաթև պոլո, 600 հատ աշխատանքային համազգեստի լրակազմ, 400 հատ ՔՊ համազգեստի լրակազմ, 400 հատ շապիկ՝ կանաչ, կարճաթև) առ այսօր մատակարարվել է միայն 400 հատ ՔՊ համազգեստի լրակազմ: Մատակարարվել են նաև 1000 հատ սվիտերներ՝ մուգ փիրուզագույն, կարճաթև, որը չի ընդունվել համապատասխան հանձնաժողովի կողմից, քանի որ չեն ներկայացվել կտորի համապատասխանության սերտիֆիկատը և լաբորատոր հետազոտության եզրակացությունը:

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 Հեռ.՝ (+374 12) 31 77 28, Էլ.փոստ՝ mes@mes.am

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ նախարարությունը միակողմանի լուծում է ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/81 ծածկագրով Պայմանագիրը:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 3.2 և Հավելված 4.1), համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.6 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվի «Արդշինբանկ» ՓԲԸ Մասիսի մասնաճյուղ ՀՀ ՖՆ գործառնական վարչության N900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, կներառվի գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Invalid signature

X
ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ
Signed by: MIRZAKHANYAN LILIT 6107860169

ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԴԱՍ

Խորհրդարանում Ազգային ժողովի «Ամառային դպրոց» ծրագրին մասնակցող աշակերտների հետ հանդիպում-դաս են անցկացրել նաեւ ընդդիմադիր պատգամավորները:

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության ու հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի Facebook-ի էջից տեղեկանում ենք, որ մի շարք թեմաների հետ մեկտեղ Թովմասյանը դպրոցի սաների հետ նաեւ 44-օրյա պատերազմի, պատերազմում պարտությանն առնչվող հարցերի վերաբերյալ է զրուցել:

Թովմասյանից բացի, ԱԺ նաեւ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանն է գնացել կրկին նույն նպատակով:

«Դասախոսության հրավերը ընդունելուս պատճառը շատ պարզ է. ես համարում եմ, որ մեր դպրոցականները արժանի չեն նրան, որ կյանքում առաջին անգամ Ազգային ժողովի շենք մտնելով՝ շփվեն միայն իշխող խունտայի երեսփոխանների հետ»,- Facebook-ի իր էջում գրել է նա:

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՄԻՋԱԴԵՊԻՑ

Գիշերը Վեդի քաղաքում ընդհարում է տեղի ունեցել հայերի եւ թուրքերի միջեւ: Միջադեպի մասնակիցները Թուրքիայի քաղաքացիներ են՝ ամուսիններ:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ամուսինները իրավապահներին պատմել են, որ տուրի են եկել, որ Մեղրիով գնան Իրանի Իսլամական Հանրապետություն: Իջել են Վեդիում, մտել են սրճարան, որից հետո սկսվել է վեճը:

Ըստ ականատեսների՝ հայերը նկատել են, որ թուրք ամուսիններ են, եւ հավաքվել են սրճարանի մոտ, որից հետո ժամանել է ոստիկանությունը: Ամուսինները, տեսնելով, որ հայերը շատանում են եւ իրենց հետ ագրեսիվ են խոսում, սկսել են ասել՝ ռադ եղէք: Վեդիի քաղաքացիներից մեկը հասկացել է թուրքերեն: Այս ամենից հետո եղել է վեճ, որը կանխվել է ոստիկանների կողմից: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ ամուսիներին տարել են ոստիկանության բաժին. նրանք հիմա այնտեղ են:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հանցագործության մասին հաղորդում է ստացվել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Հովհաննիսյանի դեմ: ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ հաղորդումը ներկայացվել է այն հիմքով, որ նա Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացրած հայտարարագրում թաքցրել է հայտարարագրման ենթակա տվյալները:

ԱԳՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

ՓԱՇԻՆՅԱՆ ՈՒ ԱԼԻԵՎԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ

Նախօրեին Բրյուսելում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի եռակողմ հանդիպման մասին երեկ կառավարության նիստում խոսեց Նիկոլ Փաշինյանը՝ ասելով, թե բնաբակումը ծավալուն է եղել, բնաբակումը հեշտ չէր:

Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիեւը նախօրեին Բրյուսելում պայմանավորվել են ԱԳՆ-ների մակարդակով շարունակել բանակցությունները խաղաղության պայմանագրի նախագծի մշակման շուրջ: Արարատ Միրզոյանն ու Ջեյհուն Բայրամովը կհանդիպեն մեկ ամսվա ընթացքում: Հետաքրքիր է, որ բրյուսելյան հանդիպումից հետո Շառլ Միշելի տարածած հայտարարության մեջ ոչ մի խոսք չկա Արցախի մասին: Ընդ որում՝ եթե նախորդ հանդիպման հայտարարության մեջ «Լեռնային Ղարաբաղը» դարձել էր «Ղարաբաղ», ապա հիմա ընդհանրապես որեւէ հիշատակում չկա, ինչն ամբողջությամբ կրկին արտահայտում է Բաքվի տեսակետը: Եվ սա այն դեպքում, երբ Հայաստանի վարչապետի աշխատակազմը հայտարարել էր, թե այդ մասին քննարկում եղել է:

Միշելի կողմից տարածված հայտարարության մեջ նշվում է միայն՝ քննարկումների առանցքում եղել են «վերջին զարգացումները Հարավային Կովկասում», որեւէ խոսք չկա նաեւ Լեռնային Ղարաբաղում վերջին լարվածության մասին, որի հետեւանքով զոհեր ու վիրավորներ եղան:

Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստում ասել է. «Երեկ մենք մամլո հաղորդագրություն ենք տարածել հանդիպման վերաբերյալ, որտեղ նշված են քննարկված թեմաները: Նաեւ նշված են այն որոշումները, որոնք կայացվել են. դրանք աշխատանքային բնույթի որոշումներ են: Իհարկե, հասկանալի է, որ քննարկումը ծավալուն է եղել, քննարկումը հեշտ չէ, բայց ես ուզում եմ նաեւ արձանագրել, որ մեր նպատակադրումները շարունակում են մնալ եւ պիտի շարունակեն մնալ այնպիսին, ինչի մասին ես հայտարարել եմ իմ հրապարակային ելույթներում. ՀՀ կառավարությունը որդեգրել է խաղաղության օրակարգը, եւ այստեղ էլ մեզ վճռականություն է անհրաժեշտ այդ օրակարգը կյանքի կոչելու համար: Մենք բոլորս պետք է հասկանանք, որ դա հեշտ չէ եւ պարզ չէ, եւ հնարավոր լուծումներն էլ ակնհայտ չեն: Մենք պետք է շարունակենք հետեւողական աշխատել: Նաեւ կարծում եմ, որ անհրաժեշտություն է եւ ժողովրդի ցանկությունն է, որ օր առաջ մեր տարածաշրջանում հաստատվի տեւական եւ համապարփակ խաղաղություն: Եվ մենք պետք է ավելի ու ավելի շատ կենտրոնանանք այս խնդրի լուծման վրա»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը նշել է նաեւ, որ հաղորդելու այլ մանրամասներ այս պահին չկան, քանի որ դրանք արդեն համառոտ ներկայացվել են պաշտոնական հաղորդագրությունում. «Հետագայում եթե կլինեն մանրամասներ, առաջարկներ կամ թեմաներ, որոնք այնքան հասունացած կլինեն, որ անհրաժեշտ լինի քննարկել կառավարությունում, հանրության հետ, քաղաքական ուժերի հետ, մենք դա, իհարկե, անպայման կանենք»:

Պաշտոնական Մոսկվան պնդում է՝ Երեւանի եւ Բաքվի միջեւ առարկայական բանակցությունները ընթանում են Մոսկվայի, այլ ոչ թե Բրյուսելի միջնորդությամբ. այս մասին Փաշինյան-Միշել -Ալիեւ եռակողմ հանդիպման նախաշեմին հայտարարել է Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ հերթական անգամ եվրոպացիներին մեղադրելով միջնորդության դափնիները յուրացնելու փորձերի մեջ:

«Դա եվրոպացիների կեղծ նախաձեռնությունն է: Դա ավելի շատ միջնորդության դափնիների անամոթ յուրացման է նման: Մենք ենք աշխատում որպես միջնորդներ, եւ այդ աշխատանքը կոնկրետ արդյունքներ է տալիս, կողմերն էլ համապատասխանաբար գնահատում են դա», - ասել է Զախարովան:

Եվրամիության միջնորդությամբ հայ-ադրբեջանական հերթական բանակցություններին արձագանքել են նաեւ Վաշինգտոնից՝ կոչ անելով կողմերին ինտենսիվացնել դիվանագիտական ներգրավվածությունն ու հասնել համապարփակ խաղաղության համաձայնագրի: ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակի տեղակալ Վեդանթ Պատելը վերահաստատել է Նահանգների հանձնառությունը՝ խթանելու Հարավային Կովկասի տարածաշրջանի անվտանգ, կայուն, ժողովրդավար, բարեկեցիկ ու խաղաղ ապագան:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին երեկ իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանի Հանրապետությունում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգան:

Նախագահ Խաչատուրյանը շնորհավորել է դեսպանին պաշտոնի ստանձնման առթիվ եւ մաղթել արդյունավետ աշխատանք:

Դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգան պատրաստակամություն է հայտնել ներդնել բոլոր ջանքերը երկկողմ հարաբերությունների օրակարգն ավելի հարստացնելու համար:

Հանդիպմանը քննարկվել են երկկողմ հարաբերությունների ակտիվացմանն ու խորացմանը վերաբերող հարցեր: Զրուցակիցները փոխգործակցության համար հետաքրքիր են համարել մասնավորապես բարձր տեխնոլոգիաների, տիեզերագնացության, զբոսաշրջության եւ գյուղատնտեսության ոլորտները:

ՍՏՈՐԱԳՐԵԼ Է ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

Նախագահ Վահագն Խաչատուրյանը օգոստոսի 27-ին հրամանագիր է ստորագրել, որում նշվում է.

«Հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին եւ 166-րդ հոդվածի 6-րդ մասերը, ինչպես նաեւ Բարձրագույն դատական խորհրդի 2022 թվականի օգոստոսի 25-ի ԲԴԽ-81-Ո-266 որոշմամբ ներկայացված առաջարկությունը.

Սարգիս Հովհաննիսյանին նշանակել Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր»:

ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՉԻ ԽԱԽՏՎՈՒՄ

Սեպտեմբերի 1-ին ընդառաջ՝ ավանդույթը չի խախտվում. այս անգամ ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանի ուշադրության կենտրոնում 44-օրյա պատերազմի անմահ հերոսների զավակներն են. «Հայրենիքին ամենաթանկը նվիրած ընտանիքները մշտապես մեր հոգածության կենտրոնում պետք է լինեն: Բարի երթ եւ արդյունավետ ուսումնական տարի բոլոր երեխաներին»:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՉԱՐԱԾԱՀՈՒՄՆԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում իրականացված աղացուցողական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել են Արարատի մարզի Այնթապ համայնքի նախկին ղեկավարի կողմից (որը ներկայումս հանդիսանում է Մասիս համայնքի ղեկավարի տեղակալը) ծառայողական լիազորությունները չարաշահելու, պաշտոնական լիազորություններն անցնելու, պաշտոնական կեղծիք կատարելու մի շարք հանգամանքներ:

Քննությամբ պարզվել եւ հիմնավորվել է, որ 2010-2021թթ. Արարատի մարզի Այնթապ համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում նշված անձը պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ է ներառել, օրենքով սահմանված կարգով չի ձեռնարկել միջոցներ՝ շենքերի եւ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ, ինքնակամ կառույց իրականացրած անձանց նկատմամբ դիտավորությամբ չի կիրառել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ: Պարզվել է, որ համայնքի ղեկավարը, նպատակ ունենալով ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքին պատկանող ընդհանուր 0.03676 հա մակերեսով հողատարածքը օտարել եղբորը, 2014թ. հոկտեմբերին հաստատել եւ եղբորն է տրամադրել պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող քաղվածք, որում ներառել է ակնհայտ կեղծ տեղեկություններ այն մասին, թե համապատասխան փաստաթղթերում եղբոր անվամբ գրանցվել է 0,04 հա տնամերձ հողամաս այն դեպքում, երբ եղբորը հողամաս հատկացնելու վերաբերյալ որեւէ գրառում չի կատարվել համապատասխան մատյաններում: Այնուհետեւ, անտեսելով ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված պահանջն այն մասին, որ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը սահմանված կարգով օտարվում են համայնքի ավագանու որոշմամբ, ակնհայտորեն դուրս գալով իր լիազորությունների շրջանակից, նշված քաղվածքը համայնքի ավագանու որոշման բացակայության պայմաններում ներկայացրել է ՀՀ կադաստրի կոմիտեի Մասիսի տարածքային ստորաբաժանում, որի հիման վրա՝ վերոհիշյալ հողատարածքի նկատմամբ գրանցվել է նրա եղբոր սեփականության իրավունքը:

Բացի այդ, համայնքի ղեկավարը, նպատակ ունենալով իրեն օտարելու ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի՝ Երեւան-Արտաշատ խճուղում գտնվող 435.7քմ մակերեսով հողամասը (որից 76.16քմ հանդիսացել է հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհ, իսկ 23 քմ-ն՝ Այնթապ համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի տարածք), ինքնակամ կառուցված 52.3քմ մակերեսով ավտոտնակը, 127.5քմ մակերեսով տնտեսական շինությունը եւ 20.1քմ մակերեսով մետաղական տնակը, ինչպես նաեւ միաժամանակ նպատակ ունենալով այլ անձանց վաճառելու Երեւան-Մեղրի մայրուղում գտնվող 85.5քմ մակերեսով հողամասը եւ ինքնակամ կառուցված ավտոտեխսպասարկման կայանը (որի մի մասը՝ 27.5քմ, ներառված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում եւ հանդիսանում է հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհ), նույն համայնքում գտնվող 16.8 եւ 12.8քմ մակերեսով հողամասերը ու դրանց վրա ինքնակամ կառուցված շինությունները, անտեսելով եւ շրջանցելով մի շարք իրավական ակտերի նորմերը, 2020թ. փետրվար եւ հուլիսի ամսիներին անձնական այլ դրդումներով, ակնհայտ կեղծ տեղեկությունների ներառմամբ, ստորագրել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող որոշումներ, ինքնակամ շինությունները ճանաչել է համայնքի սեփականություն եւ օրինական հողամասերն ապօրինի ներառել է համայնքային սեփականություն համարվող օտարվող հողամասի սահմաններում եւ գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով նշված հողամասերից մեկն օտարել է ինքն իրեն, իսկ մյուս երեք հողամասերը՝ երեք այլ անձանց: Հետագայում որոշումները ներկայացրել է ՀՀ կադաստրի կոմիտեի Մասիսի տարածքային ստորաբաժանում, որի հիման վրա՝ հիշյալ հողամասերի եւ շինությունների նկատմամբ գրանցվել է նրանց սեփականության իրավունքը:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ Այնթապ համայնքի նախկին ղեկավարին մեղադրանք է ներկայացվել՝ 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով, որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասին (5 դրվագ), 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով, որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասին (5 դրվագ), եւ 2003թ. ՀՀ քրեական օրենսգրքի 315 2 -րդ հոդվածով, որը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասին: Որպես խափանման միջոց նրա նկատմամբ ընտրվել է բացակայելու արգելքը եւ պաշտոնավարման կասեցումը: Նախաքննությունը շարունակվում է:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՀԱՊԱՏԻԺ՝ ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում եւ դրանից հետո արձանագրված առերեւույթ պետական դավաճանության դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների նյութերի ուսումնասիրությունը փաստում է, որ պետության անվտանգության դեմ ոտնձգող ծանրագույն հանցագործություն հանդիսացող պետական դավաճանության դրսեւորումները, հակառակորդ պետության հատուկ ծառայությունների կողմից ՀՀ քաղաքացիների հավաքագրման եւ գործակալական ցանցերում ներգրավելու նպատակով ժամանակակից տեխնոլոգիաների եւ մեթոդների կիրառումը, հատկապես տարածաշրջանում առկա անվտանգային մարտահրավերների ֆոնին, առաջնային են դարձնում այս հանցատեսակի դեմ քրեաիրավական պայքարն ուժեղացնելու, պատժողական քաղաքականությունը խստացնելու հարցը:

Արձանագրվում են պետական դավաճանության այնպիսի քստմնելի դրսեւորումներ, որոնց դեպքում սոցիալական արդարության, անվտանգության ապահովման հրատապ խնդիրները հարուցում են նմանատիպ արարքներ կատարած անձանց նկատմամբ ամենախիստ պատժի՝ ընդհուպ մահապատժի կիրառման անհրաժեշտություն:

Հաշվի առնելով խնդրի կարեւորությունը՝ դատախազությունում ուսումնասիրվել է ՀՀ կողմից այս ոլորտին առնչվող միջազգային հանձնառությունների դաշտը, եւ պարզվել է, որ ՀՀ-ն չունի մահապատժի բացարձակ արգելք սահմանելու ուղղակի միջազգային-իրավական պարտավորություն:

ՀՀ-ում մահապատժի դատապարտելու եւ պատիժը փաստացի կիրառելու առաջնային արգելքը նախատեսված է ՀՀ սահմանադրության 24-րդ հոդվածով, որի 3-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի: Սահմանադրական նշված նորմն ունի իմպերատիվ բնույթ, այսինքն՝ այս արգելքը կարող է հաղթահարվել միայն ՀՀ սահմանադրությունում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով: Միաժամանակ, ՀՀ սահմանադրության 76-րդ հոդվածով սահմանվում է, որ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու իրավունքների բնագավառում պարտավորություններից հնարավոր է շեղվել ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Հաշվի առնելով այս իրողությունները եւ պետական դավաճանության դրսեւորումներից ածանցվող անվտանգային սպառնալիքների մակարդակը՝ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը գրությամբ դիմել է ՀՀ սահմանադրական բարեփոխումների խորհրդի նախագահ, ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանին:

Արթուր Դավթյանն առաջարկել է սահմանադրական փոփոխությունների շրջանակներում քննարկել պետության անվտանգության եւ պետության կենսագործունեության հիմունքների դեմ ուղղված ծանրագույն հանցագործության՝ պետական դավաճանության համար մահապատիժը որպես պատժատեսակ կիրառելու հնարավորություն տվող սահմանադրաիրավական կարգավորումներ սահմանելու հարցը:

ԼՈՒՐԵՐ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի նկատմամբ կալանքի միջնորդությունը: Այս մասին հայտնել է Արզումանյանի պաշտպան Երեմ Սարգսյանը: Ավելի վաղ Քննչական կոմիտեն հաղորդագրություն էր տարածել, ըստ որի՝ Միքայել Արզումանյանին մեղադրանք է առաջադրվել զինվորական պաշտոնեական անփութության համար: Ըստ հաղորդագրության՝ իրականացված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ գեներալ-լեյտենանտը պատերազմի ընթացքում հայտարարված ռազմական դրության պայմաններում 2020 թվականի հոկտեմբերի 30-ից մինչեւ նոյեմբերի 9-ը Շուշի քաղաքի եւ հարակից շրջանների պաշտպանության կազմակերպման ընթացքում անփույթ վերաբերմունք է դրսեւորել իր ծառայողական պարտականությունների նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ պատշաճ կատարելով դրանք, որպիսի գործողություններն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ. հակառակորդի զինված ուժերն ամբողջությամբ իրենց վերահսկողության տակ են վերցրել Շուշի քաղաքը եւ մատույցները, յուրային ստորաբաժանումները կրել են զոհեր եւ վիրավորներ:

ԹՄՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 19-ին ոստիկանության Կոտայքի բաժնի քրեական հետախույզները ստացած օպերատիվ տվյալներն իրացնելիս Աբովյան քաղաքում ձերբակալեցին եւ ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով բաժին բերեցին Աբովյան քաղաքի Չափիչի փողոցի 55-ամյա մի բնակչի: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեց թղթե փաթեթ՝ դեղնականաչավուն կանեփանման զանգվածով, թղթի մեջ փաթեթավորված կապույտ մանր բյուրեղներով զանգված, օգտագործված ներարկիչ ու սրվակ: Ըստ տղամարդու՝ հայտնաբերված կանեփն ու կրիստալն իրենն էին: Նախաքննության ընթացքում ձեռնարկված հետագա միջոցառումներով ստացվեց տեղեկություն 55-ամյա տղամարդուն թմրամիջոց իրացնողի վերաբերյալ. Աբովյան քաղաքի 58-ամյա բնակիչ էր: Այդ ուղղությամբ միջոցառումները տրամաբանական ավարտին հասան հունիսի 27-ին: Հուլիսի 25-ին Աբովյան քաղաքի Հատիսի փողոցում, թմրանյութ պահելու կասկածանքով, ձերբակալվեց եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ ոստիկանության Կոտայքի բաժին տեղափոխվեց մի տղամարդ, որի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց Մեթամֆետամինի նմանվող բյուրեղանման զանգվածով թղթե փաթեթ: Օգոստոսի 16-ին, նույն կասկածանքով, Կապուտան-Կոտայք ճանապարհին ձերբակալվեցին եւս երկու հոգի: Երկուսի մոտ էլ հայտնաբերվեցին կանեփանման զանգվածներով փաթեթներ: Նույն օրը Կապուտան-Կոտայք-Ակունք գյուղերի խաչմերուկում ձերբակալվեցին եւս երեք հոգի եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ տեղափոխվեցին Կոտայքի բաժին: Նրանք էլ նույն հատիսցուց 20 հազար դրամով ձեռք էին բերել բյուրեղանման զանգված, ըստ իրենց՝ կրիստալ: Ապօրինի թմրաշրջանառության շղթայի չորս մասնակից կալանավորված է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 45 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

2022թ. հուլիսի 19-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Բերդ քաղաքի նստավայրում, դատավոր Զոյա Զաքինյանի նախագահությամբ, ընթանում է Երեւան քաղաքի բնակիչ, 1977թ. ծնված Վահե Հովսեփյանի դատավարությունը: Նրա դատավարության դատական հաջորդ նիստը նշանակված է հոկտեմբերի 5-ին:

Վ. Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2020 թվականի հոկտեմբերի 17-ից մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ ՊՆ թիվ Ն զորամասում 1-ին մարտավարական խմբի հրամանատարի պաշտոնը, հանդիսանալով հիշյալ զորամասի միանձնյա ղեկավարը, պատասխանատու լինելով իրեն վստահված զորամասի մշտական, մարտական ու զորահավաքային պատրաստականության, զորամասի մարտական խնդիրների հաջող կատարման, անձնակազմի մարտական պատրաստության, զինվորական կարգապահության, ներքին կարգուկանոնի, սպառազինության, ֆինանսական ապահովման համար, իրականացնելով վարչատնտեսական, կազմակերպատնտեսական լիազորություններ եւ հանդիսանալով պետ, իր ծառայողական դիրքով եւ զինվորական կոչումով բարձր պաշտոնատար անձ, Տավուշի մարզի Գանձաքար գյուղի բնակիչ Աշոտ Մելիքսեթյանի կողմից ՀՀ ՊՆ-ին նվիրաբերած «Ուազ» մակնիշի ավտոմեքենան 2020 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ ՊՆԶ եւ ԶՀԾ Տավուշի թիվ 1 տարածքային ստորաբաժանումից առանց համապատասխան փաստաթղթային ձեւակերպման ստանալուց հետո, պարտավոր լինելով այն մուտքագրել նույն զորամասի հաշվեկշռում ու շահագործել բացառապես ՀՀ ՊՆ կարիքների համար, հիշյալ ավտոմեքենան ստանալու օրվանից տեւական ժամանակ չի մուտքագրել զորամասի հաշվեկշռում, այլ փոխարենը, շահադիտական եւ անձնական շահագրգռվածությունից ելնելով, իր անձնական օգտագործման «Բագի» մակնիշի ավտոմեքենան վերանորոգելու համար որոշել է հիշատակված նվիրաբերված ավտոմեքենան զորամասի տարածքից տեղափոխել իր ծանոթի հողատարածք, այն ապամոնտաժել, ապամոնտաժված ավտոպահեստամասերի մի մասը տեղադրել իրեն պատկանող «Բագի» մակնիշի ավտոմեքենայի վրա, իսկ մյուս պահեստամասերը՝ մաս-մաս վաճառել:

Վ. Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով («Յուրացնելը կամ վատնելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով, խոշոր չափերով»): Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին սոտորագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կառավարությունն ընդունել է որոշում, որով նախատեսվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը 2022 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերին հատկացված միջոցների միջեւ կատարել վերաբաշխում 3,366,667.8 հազար դրամ գումարի շրջանակներում, որից 1,133,879.9 հազար դրամը կուղղվի ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ:

Վերաբաշխումը կատարվում է կապիտալ ծրագրերի իրականացման համար: 2,232,787.9 հազար դրամ գումարի շրջանակում նախատեսվում է ապահովել մի շարք կրթական, մարզական եւ մշակութային հաստատությունների շինարարական աշխատանքների կատարումը եւ նախագծումը, ինչպես նաեւ գույքային հագեցվածության բարելավումը: Արդյունքում կբարելավվեն մի շարք կրթական, մշակութային եւ մարզական հաստատությունների շենքային պայմանները եւ կապահովվեն գույքով: Մասնավորապես, նախատեսվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հատկացնել 14,688.0 հազար դրամ գումար՝ «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրում լողավազանի եւ հրաձգարանի կառուցման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման համար: 330,901.7 հազար դրամ կհատկացվի մարզական հաստատությունները գույքով ապահովելու համար: Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիային կհատկացվի 600,540.5 հազար դրամ 2023թ.-ին Հայաստանում Եվրոպայի ծանրամարտի մեծահասակների առաջնությունը անցկացնելու նպատակով անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար:

41,739.0 հազար դրամ կհատկացվի Էջմիածնի պետական քոլեջի տանիքի նորոգման համար, նախատեսվում է գումար հատկացնել նաեւ Գյումրու N 4 արհեստագործական պետական ուսումնարանին եւ Դիլիջանի արվեստի պետական քոլեջին անհրաժեշտ գույքով ապահովման համար: Որոշմամբ գումար է հատկացվում ՀՀ Արագածոտնի մարզի Ամբերդ ամրոցի վթարային հատվածների ամրակայման եւ դրա տարածքների բարեկարգման համար կազմված գիտանախագծային փաստաթղթերի մշակման ծառայության դիմաց մնացորդային գումարի վճարման եւ ՆՆՓ-երի փորձաքննության համար:

43,600.0 հազար դրամ կհատկացվի մի շարք թանգարաններին եւ Հայաստանի ազգային պատկերասրահին համակարգչային տեխնիկայով ապահովման համար: 59,833.8 հազար դրամ կհատկացվի Հայաստանի ազգային գրադարանին վարչական մասնաշենքի ջեռուցման համակարգի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախատեսվում է նաեւ ձեռք բերել Հայաստանի ազգային գրադարանի համար նոր սերվերային համակարգ:

Որոշմամբ նախատեսվում է վերաբաշխման միջոցով գումար հատկացնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզի Գետաշեն եւ Լենուղի բնակավայրերում «Մոդուլային» տիպի 144-տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզների կառուցման աշխատանքների մեկնարկման համար: ՀՀ 2022թ.-ի պետական բյուջեով հատկացվել է գումար նշյալ բնակավայրերում տիպային նախագծային փաստաթղթերի տեղակապման եւ փորձաքննության համար: Ներկայումս փաստաթղթերի տեղակապման աշխատանքներն ավարտվել են, եւ փաստաթղթերը ստացել են պարզ քաղաքաշինական եւ պետական համալիր փորձաքննությունների դրական եզրակացություններ: Մսուր-մանկապարտեզների կառուցման մեկնարկը նախատեսված էր 2023թ.-ին: Աշխատանքները նախատեսվում է մեկնարկել 2022թ.-ին եւ այդ նպատակով յուրաքանչյուրի համար հատկացնել 80,023.2 հազար դրամ գումար:

Նախատեսվում է նաեւ գումար հատկացնել արտադպրոցական հաստատություններին համակարգչային տեխնիկայով եւ «ՀԾ-Հաշվապահ» համակարգով ապահովման համար՝ ընդհանուր 26,940.0 հազար դրամ գումարի շրջանակում: Գումարը հատկացվում է թվով 32 հաստատության համակարգիչ, տպիչ սարք եւ անխափան սնուցման սարք ձեռք բերելու համար: Գումար կհատկացվի Հայաստանի երգի պետական թատրոնին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնին, Հայաստանի էստրադային ջազ նվագախմբին անհրաժեշտ գույքով ապահովման համար: Գումար կհատկացվի Զոլաքար գյուղի Ա. Վարդանյանի անվան N2 միջնակարգ դպրոցի ցանկապատման, տարածքի բարեկարգման եւ գույքով ապահովման համար, Ռյա Թազայի Ա? Ավդալի անվան միջնակարգ դպրոցում ջեռուցման համակարգի տեղադրման, ինչպես նաեւ թվով 8 հանրակրթական դպրոցի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների մեկնարկման համար (713,4 մլն ՀՀ դրամ):

Արձագանքելով Նիկոլ Փաշինյանը նշել է, որ վերակառուցվելու են Երեւանի Վահան Թեքեյանի անվան թիվ 92, թիվ 37, թիվ 136 հիմնական դպրոցների, Փշատավանի, Սարդարապատի միջնակարգ դպրոցների, Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոցի, Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի եւ Լոռու մարզի Ալավերդու համար 12 հիմնական դպրոցի մարզադահլիճները: Անդրադառնալով դպրոցների եւ մանկապարտեզների կառուցման ծրագրերին՝ վարչապետը նշել է, որ երկու օր առաջ այդ թեմայով աշխատանքային քննարկում է անցկացվել: Այդ համատեքստում կառավարության ղեկավարը կարեւորել է մինչեւ 2026 թվականի համար ծրագրերով նախատեսված աշխատանքների պլանավորում ունենալը, ասենք՝ 2023 թ. հունվարի 1-ի դրությամբ քանի դպրոց եւ քանի մանկապարտեզ պետք է շահագործման հանձնված լինի 2023թ. սեպտեմբերի 1-ին եւ այդպես մինչեւ 2026թ. «Դա պետք է արվի, որպեսզի մեզ համար 300 դպրոց եւ 500 մանկապարտեզ ունենալու ճանապարհային քարտեզը հստակ լինի: Մենք այսօրվանից եւ՛ բյուջետավորման, եւ՛ մնացած բաղադրիչներով համոզված պետք է լինենք, որ ճիշտ ժամանակացույցով են առաջ շարժվում»: Նիկոլ Փաշինյանը կարեւորել է նաեւ ֆեդերացիաների հետ համագործակցությունը առկա խնդիրները նախօրոք լուծելու առումով:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՐՑ

Կառավարության երեկվա նիստում վարչապետն անդրադարձել է կենսաթոշակների բարձրացման հարցին:

«Դուք գիտեք, որ կառավարության նախորդ նիստերից մեկում որոշում ենք կայացրել կենսաթոշակները բարձրացնելու վերաբերյալ: Մեր նպատակադրումն այս փուլում թոշակներն առնվազն 3 000 դրամով ավելացնելն էր, սակայն պարզվել է, որ թոշակառուների 97,5 տոկոսի թոշակն է սեպտեմբերի 1-ից բարձրանում առնվազն 3 000 դրամով, 6 400 թոշակառուի թոշակը գործող բանաձեւով բարձրանում է 2 500 դրամով, իսկ 5300-ինը՝ 1 900 դրամով: Մենք քննարկում ունեցանք եւ գտնում ենք, որ ճիշտ են այդ դիտարկումները, մանավանդ՝ մեր հայտարարություններին ֆոնին, եւ հարկ համարեցինք, որ 2500 եւ 5300 մեր սիրելի թոշակառուների համար լրացուցիչ որոշում կայացնել, որպեսզի սեպտեմբերի 1-ից, ինչպես խոստացել էինք, բոլորինը բարձրանա առնվազն 3000 դրամով»,- ասել է վարչապետը:

Ինչպես նշել է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, որպեսզի խնդրին ավելի ինստիտուցիոնալ լուծում տրվի, եւ օրենքով սահմանված հաշվարկման բանաձեւով նման թյուրընկալումների առիթ չհանդիսանա, քննարկումների արդյունքում որոշվել է նվազագույն կենսաթոշակը բարձրացնելու նախագիծ մշակել: Այն նախատեսվում է սահմանել 31 600 դրամ, որը կերաշխավորի բոլոր կենսաթոշակառուների կենսաթոշակի առնվազն 3000 դրամով բարձրացումը:

Անդրադառնալով կենսաթոշակների բարձրացմանն ուղղված կառավարության քայլերին, այդ թվում՝ անկանխիկ առեւտրի դեպքում կենսաթոշակի 10 տոկոսի հետվճարի միջոցառմանը՝ Նիկոլ Փաշինյանը նշել է, որ իրենց նպատակադրումն այն է, որ պարենային զամբյուղի արժեքից ցածր թոշակ չլինի Հայաստանում:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 21 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 31-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԾԻԾԱՂԵԼԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ

Հայաստանի կառավարությունը չի կարող հանդուրժել ուսուցիչներին եւ դաստիարակներին վճարվող ծիծաղելի աշխատավարձերը եւ դրանք ընդհուպ եռապատկելու գործընթաց է սկսել. կառավարության հերթական նիստի ժամանակ այս մասին ասաց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Վարչապետը նշեց, որ այդ գործընթացը պետք է զուգակցվի ուսուցիչների կամավոր ատեստավորմամբ:

«Ընդ որում՝ դա պետք է լինի շարունակական գործընթաց, եւ ատեստավորված ուսուցիչները հինգ տարին մեկ անգամ նույն եղանակով իրենց աշխատավարձը կրկին բարձրացնելու հնարավորություն պետք է ստանան: Այսինքն՝ ամեն հինգ տարին մեկ անգամ կամավոր ատեստավորում անցած ուսուցիչները նորից կարող են կամավոր ատեստավորվել ու կրկին աշխատավարձի բարձրացում ունենալ, որովհետեւ ժամանակի ընթացքում գնաճ է տեղի ունենում, փոխվում են գները, եւ ուսուցիչները նույնպես այդ աշխատավարձերը որակավորման վերահաստատմամբ պետք է բարձրացնելու հնարավորություն ունենան»,- ասաց Փաշինյանը: Ինչ վերաբերվում է մի քանի տարի կամավոր ատեստավորում չանցած ուսուցիչներին, վարչապետը նշեց, որ նրանք այդ կարգավիճակը պահպանելու հնարավորություն չեն ունենալու: «Այսինքն՝ ուսուցիչ աշխատելու հնարավորություն չեն ունենալու»,- պարզաբանեց Փաշինյանը: Վարչապետի խոսքով՝ նույն գործընթացում պետք է ընդգրկվեն նաեւ մանկապարտեզների դաստիարակները:

ԿՀԱՆՎԵՆ ԱՃՈՒՐԴԻ

Պետական կառավարման մարմիններում կուտակված չշահագործվող 654 ավտոմեքենա առաջիկայում կհանվի աճուրդի: Այս մասին երեկ ՀՀ կառավարության նիստում հայտնեց ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը:

«Նախնական ենթադրվում է, որ մոտ 200 մլն դրամ կարող է դրա արդյունքում բյուջե մտնել»,- ասաց Սանոսյանը:

Նիկոլ Փաշինյանը հետաքրքրվեց, թե արդյոք ավտոմեքենաներն այն վիճակում են, որ կվաճառվեն, ինչին Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ Առնակ Ավետիսյանն արձագանքեց.

«Համոզված եմ, որ կվաճառվեն. թե ինչ գնով, դա է հարցը: Գինն աճուրդային եղանակով հնարավոր կլինի այնքան իջեցնել, որ նույնիսկ այն մեքենաները, որոնք փաստացի մետաղի ջարդոն են, հնարավոր լինի օտարել»,- ասաց նա:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՀԵՐԸ ԿՏԵՂԱՓՈԽՎԵՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

Հանրակրթության բնագավառում կառավարությունը պետք է ուշադրություն դարձնի նոր տեխնոլոգիաների կիրառմանը: «Այսօր լայնորեն տարածվում է հեռավար ուսուցումը ամբողջ աշխարհում, եւ մենք պետք է ապահովենք նաեւ անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը, որպեսզի մեր երեխաները նաեւ նմանատիպ որակյալ ծառայություններից օգտվելու հնարավորություն ունենան»,- ասաց Փաշինյանը:

«Հայաստանում այսօր տասնյակ հազարավոր երեխաներ զրկված են պատշաճ մանկապարտեզներում, նախակրթարաններում ու դպրոցներում որակյալ կրթություն ստանալու հնարավորությունից: «Մասնագիտական կրթության եւ ուսուցման բնագավառի հաստատությունները միշտ չէ, որ հասանելի են սովորողներին, եւ միշտ չէ, որ ապահովում են պատշաճ մասնագիտական որակավորում: Դրա հետեւանքով մենք, մի կողմից, ունենք գործազրկություն, մյուս կողմից՝ գնալով ավելի բարձր են հնչում երկրում որակավորված աշխատուժի բացակայության մասին պնդումները»,- նշեց Փաշինյանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դիտարկմամբ՝ Հայաստանի բազմաթիվ գյուղեր դատարկվել են նաեւ այն պատճառով, որ, նախադպրոցական տարիքից սկսած, երեխաների պատշաճ կրթություն ստանալու ոչ մի հնարավորություն եւ հեռանկար չի եղել այդ գյուղերում:

Ծնողները նախընտրում են գյուղերից հեռանալ նաեւ երեխաների համար կրթության հեռանկար ստեղծելու համար: Վարչապետի կարծիքով՝ այժմ գյուղական բնակավայրերում բացվող մանկապարտեզները, դպրոցները Հայաստանի մի շարք գյուղերի վերածննդի անկյունաքարն են դառնալու:

Նիկոլ Փաշինյանը հատուկ ուշադրության է հրավիրում միջգյուղական կրթահամալիրների ծրագրի վրա: «Նմանատիպ ծրագրեր իրականացնելու ենք այն գյուղերի համար, որոնցից ոչ մեկին անհրաժեշտ թվակազմ չկա առանձին դպրոց կամ մանկապարտեզ ունենալու համար, եւ կա հնարավորություն մի քանի գյուղերի երեխաներին հավաքելու մեկ տեղում: Մենք նոր շենքեր կկառուցենք, դրանք կհագեցնենք նոր գույքով, դեպի այդ համալիրները տանող նոր ճանապարհներ կկառուցենք, երեխաներին տեղափոխելու համար նոր ավտոբուսներ կամ միկրոավտոբուսներ կգնենք եւ կապահովենք պատշաճ կրթություն ստանալու նրանց իրավունքը»,- ասաց Փաշինյանը:

Վարչապետն ընդգծեց նաեւ, որ գյուղական եւ քաղաքային բնակավայրերում բացվող եւ բացվելիք մանկապարտեզային, նախակրթարանի դպրոցական տեղերը ոչ միայն պատշաճ կրթություն ստանալու հնարավորություն են տալու մանուկներին՝ նրանց բարեկեցիկ կյանքի հիմքը դնելով, այլեւ նրանց մայրիկների համար կրթություն ստանալու, հանրային եւ տնտեսական գործունեություն մեջ ներգրավելու ճանապարհ են բացելու, որն իր հերթին Հայաստանի տնտեսական, քաղաքական եւ քաղաքակակրթական զարգացման էական գործոն է դառնալու, եւ բազմաթիվ ընտանիքներ կրթության ու աշխատանքով հաղթահարելու են աղքատությունը: «Մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի տաղանդի խրախուսման, տաղանդների փնտրտուքի բացահայտման ու պաշտպանության մեխանիզմների ձեւավորումը:

Վարչապետի խոսքով՝ Հայաստանում չեն գործում բուհական պատշաճ չափորոշիչներ, բազմաթիվ բուհեր պարզապես հոգեվարքի մեջ են, բուհական դիպլոմը միշտ չէ, որ նշանակում է բարձրագույն կրթություն:

«Սրա հետեւանքով ավելի ու ավելի հաճախ են լսվում տարակուսած բողոքներ, թե մարդիկ բարձրագույն կրթությամբ, երբեմն՝ երկու դիպլոմով, ի վիճակի չեն աշխատանք գտնել եւ մատնված են աղքատության»,- ասաց Փաշինյանը: Վարչապետն ընդգծեց՝ այս իրավիճակը այլեւս հանդուրժելի չէ, որովհետեւ գոյություն ունի ապագայի հաշվին եւ ական է Հայաստանի ապագայի տակ: «Ըստ այդմ, կրթության ոլորտում մենք լայնածավալ բարեփոխումներ ենք իրականացնում: Մինչեւ 2026 թվականը Հայաստանում 300 դպրոց եւ 500 մանկապարտեզ կառուցելու, վերակառուցելու կամ հիմնանորոգելու մեր ծրագիրը, որը ամրագրված է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրում, մեկնարկել է:

«Ընդունելության քննությունների խայտառակ վիճակագրությունը պետք է ուժեղ ազդակ դառնա սրա համար: Այս տարի բուհական ընդունելության տեղերի շուրջ 60 տոկոսը թափուր են մնացել, ընդ որում՝ պետական բուհերում թափուր է մնացել տեղերի ավելի քան 40 տոկոսը, մասնավոր բուհերում՝ շուրջ 98 տոկոսը, չնայած կան պետական բուհեր, որոնցում վիճակագրությունը մոտ է մասնավորի ցուցանիշներին: Այսինքն՝ ունենք պետական բուհեր, որտեղ պետությունը հատկացրել է տեղեր, եւ 90, 92, 94, 98 տոկոսով թափուր են մնացել»,- ընդգծեց Փաշինյանը:

«Այդ բուհերը լիարժեք պետական ֆինանսավորմամբ կհամապատասխանեցվեն միջազգային չափորոշիչներին՝ սկսած կրթական, հետազոտական, մարզական, հանրակացարանային ենթակառուցվածքներից մինչեւ միջազգային կրթական ծրագրերը եւ որակավորված եւ պատշաճ վճարվող պրոֆեսորադասախոսական կազմը»,- եզրափակեց Փաշինյանը: Փաշինյանը նաեւ հավելեց, որ կառավարությունը արդեն կողմնորոշվել է ակադեմիական քաղաքի տեղադիրքի հարցով: «Այն կկառուցվի Արագածոտնի մարզում, ավելի կոնկրետ՝ Աշտարակում, եւ միավորվող բուհերը ժամանակի ընթացքում կտեղափոխվեն այնտեղ: Մեր բուհերը, ըստ այդմ, պետք է գրավիչ լինեն ոչ միայն հայաստանյան, այլ նաեւ օտարերկրյա ուսանողների համար: Եվ օտարերկրացի ուսանողների թվի շարունակական ավելացումը մեր բուհական համակարգի մրցունակության ամենավստահելի ցուցիչը պետք է դառնա»,- ասաց Փաշինյանը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Հ/Ա Ա-3 թաղամաս, 28 շենք, 24 հասցեում գտնվող 64,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 20300000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 19.09.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 19.10.2022թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առավաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

ԳԻՏԵԼԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Երեկ՝ սեպտեմբերի 1-ին, ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, նշվեց Գիտելիքի միջազգային օրը: Հայաստանի Հանրապետության դպրոցներում հնչեց առաջին զանգը: Առաջին դասարանցիները ստի թրթիռով առաջին անգամ դպրոց եկան՝ շփոթված, մի փիչ վախվորած, բայց մեծ ուրախությամբ: Այս հուզախառն տրամադրություններից անմասն չեն մնացել նաեւ հայկական շոու բիզնեսի ներկայացուցիչները:

ArmLur.am-ը առանձնացրել է հայկական շոու բիզնեսի այն ներկայացուցիչներին, որոնք երեկ իրենց երեխաներին առաջին անգամ ճանապարհել են դպրոց:

Այս տարի առաջին քայլերն է անում դեպի դպրոց երգչուհի Էմմի առաջին զավակը՝ Դանիելը: Այս առթիվ նա լուսանկարներ է հրապարակել եւ շնորհավորել որդուն:

Նշենք, որ երգչուհին ամուսնությունից հետո մշտական բնակություն է հաստատել Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Երեկ դպրոց է ճանապարհել նաեւ իր առաջնեկին հաղորդավարուհի, մոդել Լիլիթ Մուրադյանը:

«Անդրեան գնաց առաջին դասարան, արդեն մեծ աղջիկ է, ես էլ՝ մեծ կին, բոլորի ճուտիկների սեպտեմբերի 1-ը շնորհավոր. դուք միայն առո՛ղջ եղեք, մնացածը մենք կանենք»,-գրել է նա:

Օրվա առթիվ գեղեցիկ եւ խորաթափանց գրառում է կատարել նաեւ սցենարիստ Անի Մաղաքյանը. «...Արդեն հինգ տարի յուրաքանչյուր սեպտեմբերի մեկ ընտանեկան տոն է... Ինքնաճանաչման վերջին շրջանում պարզեցի ինձ համար, որ ամեն տարի անհամբեր սպասում եմ սեպտեմբերին՝ վստահ լինելով, որ հաջողություններ ու անակնկալներ են սպասվում, հետո հասկացա, որ մանկությունից եկած տպավորություններ են: Սեպտեմբերի համար նոր հագուստ էինք առնում, նոր պայուսակ ու իրեր. դա տարվա ամենասպասված ժամանակն էր... Մասնագիտական տերմիններով ասած՝ կյանքիս նոր եթերաշրջանն էր, որ տեւեց 16 տարի (դպրոց, համալսարան, մագիստրատուրա), եւ հիմա արդեն հինգ տարի է՝ յուրաքանչյուր սեպտեմբերի մեկին սկսում է նոր եթերաշրջան...»:

Իսկ հաղորդավարուհի Մերի Ներսիսյանը, շնորհավորելով եւ բարի երթ մաղթելով միջնեկ դստերը, որն առաջին դասարան է գնում, գրել է. «Աաաաա... հասանք. Սառան գնաց 1-ին դասարան: Ասե՞մ՝ ինչ եմ զգում: Չեմ կարող. սա նոր աշխարհ է, նոր փուլ է, նոր կյանք, որտեղ ամեն ինչ չափազանց ծանոթ է, բայց միշտ հուզիչ ու արտասվոր:

Շնորհավորում եմ բոլոր փոքրիկներին ու մեծիկներին: Զագերին՝ հետաքրքիր ու բացահայտումներով լի տարի, իսկ ծնողներին՝ համբերություն»:

Առաջին քայլերն են դեպի դպրոց արել նաեւ երգիչ Արամեի, Սիրուշոյի եւ Լիլուի երեխաները:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ԱՆՀԱՄԲԵՐ ԵՄ»

ԹԵՄԱՆ՝ «50 ՏԱՐԻ՝ ՄԱՐՍԻ ՎՐԱ»

System of a Down ռոք խմբի մենակատար Սերժ Թանկյանը հրապարակել է իր եւ Բրայան Մեյի լուսանկարը՝ կից գրելով. «Անհամբեր եմ»:

Բրայան Մեյը եւ Սերժ Թանկյանը 2022 թվականի սեպտեմբերի 5-ից 10-ը կներկայացնեն Queen-ի The Show Must Go On երգը Հայաստանում՝ STARMUS VI փառատոնում:

Նշենք, որ սեպտեմբերի 7-ին Մեյը հանդես կգա Another world համերգային ծրագրով, որին կմասնակցեն Գրեհամ Գոլդմանը, Դերեկ Շերինյանն ու Sons of Apollo խմբի մասնակիցները, Մոնսերատ Մարտին, Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը:

Նշենք նաեւ, որ փառատոնի երաժշտական մասում հատուկ հարգանքի տուրք է մատուցվելու դուդուկի հանգուցյալ վարպետ Ջիվան Գասպարյանին:

STARMUS VI փառատոնը ներկայացնում է լեգենդար տիեզերագնացների, Նոբելյան մրցանակի դափնեկիրների, գիտության, տեխնիկայի, մշակույթի եւ արվեստի նշանավոր գործիչների շնորհանդեսները:

Փառատոնի յուրաքանչյուր թողարկում կազմակերպվում է տիեզերքի հետախուզման հետ կապված որոշակի թեմայի շուրջ, եւ այս տարվա թեման է «50 տարի՝ Մարսի վրա»:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԴԱՍԱՄԵՆՅԱԿ

Երեկ՝սեպտեմբերի 1-ին, Արշավիր Շավարշյանի անվան թիվ 40 հիմնական դպրոցում բացվեցին դպրոցի սիրելի շրջանավարտներ Համլետ Հովհաննիսյանի եւ Արման Խաչատրյանի անունով դասասենյակներ՝ վառ պահելով նրանց անունն ու գործը: Նշենք, որ Համլետն ու Արմանը զոհվել են 44-օրյա պատերազմում՝ խորը վիշտ թողելով բոլորի սրտերում: Նրանց ապրեցնելն ու նրանց անունն ու հիշատակը վառ պահելը յուրաքանչյուրիս պարտքն է:

ArmLur.am-ի հետ զրույցում դպրոցի տնօրեն Լիանա Մուրադյանն ասաց, որ այն դասասենյակները, որտեղ Համլետն ու Արմանն են սովորել, կոգեշնչեն աշակերտներին՝ լինելու հայրենատեր եւ ազգային արժեքներն իրենց մեջ կրող քաղաքացիներ: Զրուցեցինք նաեւ նահատակված հերոսների ծնողների հետ, որոնք շատ հուզված, բայց հպարտ էին իրենց զավակներով:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՉԻ ՏԵՂԱՓՈԽՎԻ

Հայկական արմատներ ունեցող ռուսաստանցի ֆուտբոլիստ Արսեն Զախարյանը չի տեղափոխվի Լոնդոնի «Չելսի»: Այս մասին գրում են ռուսական ԶԼՄ-ները: Զախարյանի տեղափոխություն չի կայանա անգլիական ակումբ Ռուսաստանի Դաշնության դեմ գործող պատժամիջոցների պատճառով:

Ավելի վաղ ԶԼՄ-ները գրում էին, որ Արսեն Զախարյանը կարող է տեղափոխվել Լոնդոնի «Չելսի»: «Ազնվականները» պատրաստ են վճարելու Մոսկվայի «Դինամո»-ի ֆուտբոլիստ Արսեն Զախարյանի հրաժարագինը, որը կազմում է 15 միլիոն եվրո:

79–ՐԴ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

Իտալական Լիդո կղզում բացվել է ամենահին միջազգային կինոստուգատեսը՝ Վենետիկի 79-րդ կինոփառատոնը: Այս տարի ցուցադրությունների մեկնարկը տրվել է ամերիկացի ռեժիսոր Նոա Բաումբախի «Սպիտակ աղմուկ» ֆիլմով, որը նկարահանված է Դոն ԴեԼիլոյի վեպի հիման վրա: Վերոնշյալ ֆիլմից բացի, մրցույթային ծրագրում ընդգրկված են 22 ֆիլմեր, ինչը նշանակում է, որ ամերիկացի դերասանուհի Ջուլիանա Մուրի գլխավորած ժյուրին լուրջ անելիքներ ունի, ինչը կավարտվի սեպտեմբերի 10-ին՝«Ոսկե առյուծի» եւ այլ մրցանակների հանձնմամբ: Փառատոնի բացման օրը արդեն իսկ մրցանակ է հանձնվել. փայլուն կարիերայի համար պատվավոր «Ոսկե առյուծի» է արժանացել Կատրին Դենեովը:

Լավագույն ֆիլմ անվանակարգում նոմինացվել են ճապոնացի ռեժիսոր Կոջի Ֆուկադայի «Անձնական կյանք», մեքսիկացի ռեժիսոր Ալեխանդրո Գոնսալես Ինյարիտուի «Բարդո», ֆրանսիացի ռեժիսոր Ռոմեն Գավրասի «Աթենա» եւ ռեժիսոր Ջոանա Հոգգի եւ Թիլդա Սուինթոնի համատեղ աշխատանք «Հավերժական դուստրը» ֆիլմերը: Լավագույն գլխավոր դերի անվանակարգում նոմինացվել են իրանցի ռեժիսոր Վահիդ Ջալիլվանդի «Պատից այն կողմ», Սանտիյագո Միտրեսի «Արգենտինա. 1985», իտալացի ռեժիսոր Սուսաննա Նիկիարելիի «Կիարա», Անդրեա Պալաորոյի «Մոնիկա», Լաուրա Պոյտրասի «Ամբողջ գեղեցկությունն ու արյունահեղությունը», Ֆրեդերիկ Ուայսմանի «Զույգ», Ռոշդի Զեմի «Կապից դուրս» եւ Ռեբեկա Զլոտովսկու «Ուրիշների երեխաները» ֆիլմերը:

● *Սեպտեմբերի 4-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Անտանիք ընտանիք» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ֆիզիկական անձը, որը հանդիսանում է վարձու աշխատող, Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից հիպոթեքային վարկով բնակարան է ձեռք բերել 2014 թվականի մարտ ամսին: Հնարավո՞ր է արդյոք համապատասխան եռամսյակի ընթացքում տվյալ վարձու աշխատողին վճարվող աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից հաշվարկված եկամտային հարկի գումարը ուղղել հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների մարմանը:

Կարինե Դանիելյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 8.2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով վճարված) եկամտային հարկը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաեւ պետության եւ (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ եւ նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից 2014 թվականի նոյեմբերի 1-ից հետո ստացված եւ փաստացի բնակարանի ձեռք բերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համաձայն ՀՀ կառավարության 19.02.2015թ. N 205-Ն որոշման 4-րդ կետի՝ վարձու աշխատողին հաշվետու եռամսյակի որեւէ ամսում հաշվարկված աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից տարբերվող այլ հարկվող եկամուտներ վճարված լինելու դեպքում այդ եկամուտների մասով հաշվարկված եւ վճարված եկամտային հարկի գումարները վերադարձման ենթակա չեն:

էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն մասնակի կենսաթոշակի իրավունք:

Քնար Սեդրակյան (53 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնակի կենսաթոշակ նշանակվում է՝

1) կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

2) թատերական եւ թատերահանդիսային կազմակերպությունների որոշ կատեգորիաների դերասաններին, եթե լրացել է նրանց 50 տարին եւ ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է,

3) 1-ին եւ 2-րդ կետերում նշված այն անձանց, որոնք մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառվել են մասնակի կենսաթոշակ նշանակելու համար (ունեցել են առնվազն 12 օրացուցային տարվա մասնագիտական ստաժ), եւ լրացել է նրանց՝ սույն հոդվածով սահմանված մասնակի կենսաթոշակի իրավունք տվող տարիքը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մասնակի կենսաթոշակ նշանակելու համար անձը կարող է դիմել դրա իրավունքը ձեռք բերելուց հետո՝ ցանկացած ժամանակ՝ մինչեւ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Խոշոր ու շղթայական ավտովթար է տեղի ունեցել Դավիթաշենի կամրջի սկզբնամասում. բախվել են Mercedes G, Kia Sorento, Toyota Corolla, Opel մակնիշի ավտոմեքենաները: Բախման հետեւանքով Mercedes G մակնիշի մեքենան կողաշրջվել է, իսկ Toyota-ն՝ գլխիվայր շրջվել ու հայտնվել ճանապարհի մեջտեղում: Բարեբախտաբար, զոհեր չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.09.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: